
ԱՐԱՄ - ՆԻՆՈՍ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ԽՆԿԻԿՅԱՆ Օ. Ս.

Հայոց երկրորդ անվանադիր Հայկյան Արամի մեծագործությունները փառաբանող ավանդությունը մշտապես գտնվել է հետազոտողների ուշադրության կենտրոնում: Նման հետաքրքրությունը պատահական չէ. ավանդությունը ավելի քան կարևոր տեղեկություններ է պարունակում հայ ժողովրդի պատմության վաղ շրջանի վերաբերյալ: Իրոք, այն հավաստում է, թե նախքան Արամ-Նինոս զույգի երևան գալը՝ ա) կազմավորման երկար ճանապարհ անցած մեր նախնիներն արդեն բնակեցրած են եղել իրենց պատմական հայրենիքի ամբողջ տարածքը, բ) հաղորդակցության լեզուն հայերենն է եղել, գ) կայացման այդ դժվարին ճանապարհին բազմիցս են դիմագրավել օտարացեղ ասպատակիչներին և դ) այդուհանդերձ, Արամի՝ իշխանության գալու ժամանակ երկիրը գտնվել է մեղացիների լծի տակ: Ահա այս իրավիճակում իշխանության եկած Արամը՝ ա) ըմբոստանում է, հաղթում մեղացիներին ու մահապատժի ենթարկելով նրանց առաջնորդ Նյուքար Մադեսին՝ նրա աշխարհը մինչև Ջարասպ լեռը հարկատու է դարձնում, բ) իր երկիրն ազատում է նաև ասորիներից՝ նրանց հալածելով մինչև Ասորեստանի դաշտը, ուր և սպանելով նրանց աստվածացրած Բարշամին՝ հարկատու է դարձնում նրա տիրույթները: Նինվեում գահ բարձրացած Նինոսը ոչ միայն չի կասեցնում Արամի այս գործունեությունը, այլև նրան իր երկրորդն է կոչում, գ) իր հաղթարշավն Արամն ավարտում է Կապադովկիայում, ուր և հաղթելով Պայապիս Քաադյանին՝ Առաջին Հայք կոչվող այդ երկրի կառավարումը հանձնում է իր ցեղակից Մշակին ու հրամայելով բնակիչներին հայերեն խոսել սովորել՝ վերադառնում է իր ոստանը՝ Արարատյան դաշտավայրը¹:

Նինոսի վերաբերյալ առավել ընդարձակ տեղեկություններ է հաղորդում Թովմա Արծրունին: Պատմիչը, ինչպես և պատմահայր Խորենացին, մատնանշելով Նինոսի՝ Քամի սերնդից լինելը, հավաստում է, որ նրա կին Դիոնեսիան, որն իր պապի անունով Մեմիրամ է անվանվել, գլուխ է բարձրացրել Նինոսի դեմ՝ իբրև օտարականի, որը պանդուխտի պես է եկել Մեմից սերող իր թագավորությունը: Պատմիչն ասում է նաև, թե Ներքովթի թագավորությունը իր սահմաններում վերականգնած Նինոսը վերաշինել է Նինվեն և այն այթոռանիստ դարձրել, որից հետո, հաստատելով պատմահոր խոսքերը, գրում է, թե Նինոսը չի հարձակվել Հայաստանի վրա. այդ քայլը կատարել են Շամիրամն ու Նինվասը, իսկ Նինվասից հետո եղած թագավորները հիշատակելու արժանի որևէ գործ չեն կատարել²: Համաձայն պատմիչների՝ այդ իրադարձությունները տեղի են ունեցել Աբրահամ նահապետի ժամանակ,

¹ **Խորենացի Ս.**, Հայոց պատմություն (թարգմ. ծանոթ և առաջ. Ս. Մալխասյանի), Ե., 1981, էջ 116-119:

² **Արծրունի Թ. և Անանուն**, Պատմություն Արծրունյաց տան (թարգմ. ծանոթ. Վ. Վարդանյանի), Ե., 1978, էջ 31-49, 55-56:

որը, ըստ Թ. Արծրունու լրացման, համընկել է Եգիպտոսի վրա հովիվների հարձակմանը:

Պատմիչների մատնանշած ժամանակաշրջանի պատմական իրադարձությունները առաջին հայացքից թվում է, թե համապատասխանում են ավանդությանը³: Իրոք, եթե նկատի ունենանք, որ հովիվները (հիքսոսներ) Եգիպտոսի պատմության մեջ հանդես են եկել մ.թ.ա. XVIII դ., իսկ Աբրահամը, համաձայն հետազոտությունների նորագույն արդյունքների, ապրել է ոչ ուշ, քան մ.թ.ա. XIX դ. վերջ - XVIII դ.⁴, ապա հարկադրված կլինենք այդ իրադարձությունները թվագրել մ.թ.ա. XIX դ. վերջ - XVIII դ.: Նշված ժամանակը համընկնում է միմիայն Շամշի-Ադադ I (մ.թ.ա. 1813-1781 թթ.) գահակալության տարիներին⁵: Որքանով է Շամշի-Ադադ I-ը համապատասխանում Նինոսի թեկնածությանը, և արդյոք համապատասխանում է այդ ժամանակաշրջանի պատմաքաղաքական իրավիճակը ավանդությանը:

Հայտնի է, որ Մարիի ամորեացի կառավարչի որդի Շամշի-Ադադը՝ Ասորեստանի պատմության մեջ առաջինն իրեն «Աշխարհի թագավոր» հռչակած անձը, Աշշուրի գահին իրոք որ հայտնվեց իբրև մի օտարական⁶: Արդ, եթե նկատի ունենանք և այն, որ նվաճողական քաղաքականություն վարող այս թագավորը, համաձայն իր հավաստիացումների, հուշատախտակ է կանգնեցրել Մեծ ծովի ափին

³ Չփորձելով ընդհանուր գծերով իսկ ներկայացնել հարցին նվիրված հսկայական գրականությունն ու արտահայտված տեսակետները (դա անհնար է հոդվածի շրջանակում), պատշաճը հատուցելով հետազոտողներին՝ նշենք միայն, որ ավանդության ժամանակաշրջանի վերաբերյալ դեռևս միասնական կարծիք գոյություն չունի: Հետազոտողների մեծամասնության կողմից ընդունելի դիտվող մ.թ.ա. IX դ. (Արամու-Շամմուրամաթ), չեն բացառվում մ.թ.ա. VIII դ. (Ուրգանա-Բարգանես) և կամ VII դ. (Էրիմենա, Պայասիս-Սադյուատես, Մադիս-Նյուքար Մադես) տեղ գտած իրադարձությունների արտացոլված լինելն ավանդության մեջ: Չի բացառվել և աքեմենյան ժամանակաշրջանի հիշողությունների առկայությունը հունական տարբերակում (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, Կ. Ա. Ե., 1971, էջ 480-481, **Բարսեղյան Լ. Ա.**, Հայ ժողովրդի ծագման և կազմավորման հարցերը պատմագիտության մեջ, Ե., 1998, էջ 132-139, 152-157, 174-260, **Ադոնց Ն.**, Հայաստանի պատմություն, Ե., 1972, էջ 327, **Խաչատրյան Վ. Ն.**, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դդ., Ե., 1998, էջ 109-113; Հարությունյան Բ.Հ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ.թ.ա. VII-VI դդ.), Ե., 1998, էջ 25-29, 60-66, 69-84, **Քոսյան Ա. Վ.**, Արամ նահապետը Կապադովկիայում [Պատմաբանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ, 1999, N 1, էջ 237-257)], **Թեֆ-Մարտրոսով Փ.**, *О царях Армении Барзанесе* (ՊԲՀ, 2000, N 1, էջ 185-197), **Olmstead A.T.**, *History of Assyria*, NY – London, 1923, p. 158, 159: Եթե ասվածին ավելացնենք և՛ «Նինոսը թագավորել է Ասորեստանում մ.թ.ա. XIII դ. առաջին կեսին և իր կնոջ՝ Շամիրամի հետ համարվում է Ասորեստանի հզորության հիմնադիրը» [**Միկիլիացի Դիողորոս**, Պատմական գրադարան (թարգմ. ծանոթ. առաջ. **Ս. Ս. Կրկյաշարյանի**), Ե., 1983, ծան. 6, էջ 163], ինչպես և՛ «Նինոսի վերաբերյալ եղած ուշ հունական ավանդություններում հնարավոր է պահպանված լինեն Թուկուլթի-Նինուրտա Ա-ի թագավորելու ժամանակաշրջանի հիշողությունները» (**Oates J.**, *Babylon*, 1979, p. 96) դարձվածները, հարկադրված կլինենք հայտնի պատմության համար իրոք որ առանձնահատուկ նշանակություն ունեցող այս ավանդության մեջ արտացոլված իրադարձությունները փնտրել բավական խոշոր ժամանակաշրջանում:

⁴ *The New Encyclopedia Britannica*, 2002, vol. I, p. 36-37.

⁵ Ժամանակագրական շփոթությունների տեղիքը չտալու նպատակով առաջնորդվել ենք՝ **Бикерман Э.**, *Хронология древнего мира*, М., 1976.

⁶ **Արծրունի Թ.** և **Անանուն**, նշվ. աշխ., էջ 30-31:

գտնվող Լաբան քաղաքում, որ կառավարել է Բաբելոնից Լիբանան ընկած տարածքները⁷, որ իր Աշշուր քաղաքում հարկ է ստացել Տուգրիշի և Վերին երկրների թագավորներից⁸, որ այդ հսկայական տարածքը նա կառավարել է իր երկու որդիների հետ և այլն, ապա Շամշի-Ադադին իրոք որ կարելի է դիտել իբրև Նեբրովթի (իմա՝ Մարգոն Աքքադացի)⁹ թագավորությունը իր սահմաններում վերականգնած մի օտարականի, որն իր նախնիների անունները ներմուծեց Ասորեստանի թագավորների ցուցակ: Եթե ասվածին ավելացնենք և այն, որ Շամշի-Ադադի մահից կարճ ժամանակ անց Ասորեստանը մինչև մ.թ.ա. XIV դ. հայտնվեց ենթակայի վիճակում (այս իրողությունը թերևս կարելի է համադրել Նինոսին հաջորդած թագավորների՝ առանձնացած կյանք վարելու դրվագի հետ), ապա կարծես թե որոշակի հիմքեր կունենանք Շամշի-Ադադ I-ին Նինոսի հետ նույնացնելու նաև պատմիչների մատնանշած ժամանակաշրջանը ընդունելու համար: Ավելին, թվում է, թե այդ թվագրության օգտին է խոսում և այն հիշատակությունը, թե ոմանք, ճշմարտությանը հակառակ գնալով, փորձել են Նինոսին նույնացնել Բելի կամ Բելի որդու հետ¹⁰: Նման ընդգծումը ենթադրել է տալիս, թե խոսքը կարող է վերաբերել նույնիսկ Մարգոն Աշշուրցուն: Փաստական նյութի քննությունը, սակայն, նման նույնացում կատարելու հնարավորություն չի ընձեռում: Իրոք, եթե ընդունենք, որ Նինոսը նույն ինքը Շամշի-Ադադն է, ապա ստիպված պիտի լինենք, ավանդությանը հակադրվելով, նրա *չափահաս* որդիներից որևէ մեկին նույնացնել Նինվասի հետ, որն անհնար է. թե՛ նրա ավագը՝ Իշմե-Դագանը, որը հոր մահից հետո գահը ժառանգեց Աշշուրում, և թե՛ հորից անգործության համար հաճախ պարսավանքի ենթարկվող Յաշմահ-Ադադը, որի աթոռանիստը Մարին էր, Նինվասի դերին հավակնել չեն կարող: Նրանք ոչ միայն չեն հարձակվել Հայաստանի վրա, այլև Շամշի-Ադադի մահից կարճ ժամանակ անց Համուրաբիի կողմից (մ.թ.ա. 1792-1750 թթ.) նվաճվեցին նախ Մարին, ապա Աշշուրը, որը դեռևս Շամշի-Ադադի կենդանության օրոք ընդհանուր սահման ուներ Ասորեստանի հետ: Այս փաստը նույնպես չի համապատասխանում ավանդությանը, որը հավաստում է Բաբելոնի նվաճված լինելը Նինոսի կողմից: Ավանդությունը մերժում է նաև Նինոսի՝ Հայաստան արշավելը, այնինչ Շամշի-Ադադը, համաձայն իր վկայության, հարկ է ստացել Տուգրիշի և Վերին երկրի թագավորներից: Հնարավոր է, որ այս հայտարարությունը չափազանցություն լինի, ինչը չի բացառում, սակայն, զենքը Հայկական լեռնաշխարհի եթե ոչ խորքերը, ապա մատույցները հասցրած լինելը: Ինչպես էլ որ այն եղած լինի, ակնհայտ է, որ Արամի՝ Ասորեստան արշավելու հանգամանքն ինքնաբերաբար բացառվում է, ինչը կրկին հակասում է ավանդությանը: Մյուս կողմից անբացատրելի է մնում նաև Արամի՝ մեղացիների հետ ճակատելու պահը: Որոշ բարդություն է առաջացնում նաև Արամ-Մշակ-Քաադյան դրվագը. հետազոտվող ժամանա-

⁷ Olmstead A.T., նշվ. աշխ., էջ 28-35:

⁸ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 25:

⁹ Խնկիկյան Օ. Ս., Հայկ և Բել. պատմական իրողությունների ժամանակաշրջանը (Հանդես ամսօրյա, Վիեննա - Երևան, 2003, էջ 166-187):

¹⁰ Խորենացի Մ., նշվ. աշխ., էջ 102:

կաշքջանում Կապադովկիայում քաղաքական գերիշխանության համար պայքար էր մղվում նախախեթական, խեթ-նեսիտական և արևմտակովկասյան ցեղերի միջև, ինչը փաստում է, թե «Պոնտոսի և Օվկիանոսի» միջև գտնվող տարածքին դեռևս ոչ մեկը չէր բռնացել: Այդ պայքարում, որի ընթացքում Մշակ-մուշկերը չեն հիշատակվում, հաղթեց Կուսարայի թագավոր Պիտիանան որդու՝ Անիտտայի հետ: Վերջինս իր իշխանությունը տարածեց Կապադովկիայում՝ ավերելով նաև Խատտուսան: Հետագոտողները Պիտիանա-Անիտտա միավորումը մի դեպքում հնդեվրոպական, իսկ մյուսում՝ խեթական են դիտում¹¹: Ուշագրավ է թվում Անիտտա-Աննիյա անունների միջև դիտվող նմանությունը, որի կապակցությամբ հանդես են գալիս հեռունները տանող այլևայլ հարցեր, որոնց քննությունը դուրս է հոդվածի շրջանակից:

Պատմական առկա նյութի՝ անհրաժեշտության սահմաններում կատարված քննությունը, ինչպես տեսնում ենք, թույլ չի տալիս ավանդության իրադարձությունները թվագրել մ.թ.ա. XVIII դ.: Այդուհանդերձ, որոշ համադրությունների առկայությունը ենթադրել է տալիս, որ վաղ շրջանի պատմական իրողությունների աղոտ արձագանքը հնարավոր է միահյուսված լինի այլ ժամանակաշրջանի դեպքերին՝ հանդես գալով իբրև այդ ժամանակաշրջանի իրողություն: Կարծում ենք, որ այս ենթադրության օգտին են խոսում նաև պատմիչների այլ վկայություններ, որոնց մասին ստորև: Այստեղ նշենք միայն, որ հետագա շարադրանքը հիմնավորելու և ամբողջացնելու նպատակով հարկ է գեթ ընդհանուր գծերով անդրադառնալ նաև ավանդության հունական տարբերակին¹², որի հանգամանալի քննությունը կատարել է Ն. Ադոնցը: Համաձայն այս տարբերակի՝ Նինոսն արշավում է Արաբիայի և Բաբելոնի վրա, դիմադրելու համար մահապատժի ենթարկում վերջինիս թագավորին, ապա գեներալ ուղղում է Հայաստանի դեմ: Վերջինիս Բարզանես թագավորը երկիրը փրկելու համար համաձայնվում է իբրև դաշնակից օգնել նրան: Այնուհետև Նինոսը հարձակվում է Մեդիայի Փառնաս թագավորի վրա, որին գերում ու որդիների հետ խաչում է: Ավանդության համաձայն՝ մոր կողմից լքված և արքունի հոտերի վերակացու Միմմասի մեծացրած Սեմիրամիսի (Օննեսի հետ ամուսնացած Սեմիրամիսը արդեն 2 զավակ ուներ) հետ ամուսնացած Նինոսը իշխանության 17 տարիների ընթացքում հպատակեցնում է Նեդոսից Տանաիս և Էգեյան ծովից Հնդկաստան ընկած տարածքները¹³:

Ավանդության հակիրճ շարադրանքից իսկ նկատելի է, որ հունական տարբերակը տարբերվում է հայկականից: Իրոք, ավանդությունների համեմատություններից տպավորություն է ստեղծվում, թե դրանցում խոսքը նույն անվան տակ հանդես եկող երկու տարբեր թագավորների մասին է, որոնք տրամագծորեն հակադիր քա-

¹¹ **Гюргадзе Г. Г.**, “Текст Аниты” и некоторые вопросы ранней истории хеттов [Вестник древней истории (3БлбхС»п”а ВДИ), 1965, N 4, с. 99-111]; **Меликишвили Г. А.**, Возникновение Хеттского царства и проблема древнейшего населения Закавказья и Малой Азии (ВДИ, 1965, N 1, с. 6-10); **Герни О. Р.**, Хетты, М., 1987, с. 20-22.

¹² **Միկիլիացի Դիողոսու**, նշվ. աշխ., էջ 16-29:

¹³ **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 93-94, 326-327, 374-378:

դաքսականություն են վարել Հայաստանի հանդեպ: Այսպես, եթե հայկական տարբերակի Նինոսն Արամին դիտում է որպես պատկառելի ուժ ներկայացնող գրեթե հավասար կողմ, ապա հունականը Բարզանեսին ներկայացնում է իբրև հաղթողի պահանջները հարկադրված կատարող թագավոր: Հունականի Նինոսը կազմավորված հզոր տերության թագավոր է, իսկ հայկականից ենթադրվում է, թե նա նույն մեդացիների գերիշխանությունից հենց նոր ազատված երկրի թագավոր է, որն Արամին այլոց դեմ (ասորիներ) շարունակվող պայքարում թեկուզ և ստորադաս, բայց հուսալի դաշնակից է դիտում, որի երկրի վրա նա, բնականաբար, չի հարձակվում: Այդ քայլը կատարում է նրա ցանկասեր կինը՝ Շամիրամը, որի գործը շարունակում է որդին՝ Նինվասը: Հայկական ավանդությունը վերջինիս դիտում է իբրև Ասորեստանի հիմնադիր, իսկ հունականն այդ դերը Նինոսին է հատկացնում: Ասվածը ենթադրել է տալիս, որ տարբերակներում իբրև Նինոս են ներկայացվել ժամանակով շատ մոտ գտնվող, թերևս իրար հաջորդած երկու թագավոր, որոնք ավանդություններում ինչ-որ չափով մեկտեղվել են: Այդ է փաստում ոչ միայն մեկ դեպքում Նինոսին, մյուսում Նինվասին Ասորեստանի հիմնադիր դիտելը, այլև երկու դեպքում էլ Շամիրամի՝ Նինոսի կին լինելը: Նման շփոթությունը չի բացառվում իրար հաջորդած թագավորների պարագայում: Իրոք, փաստական նյութի քննությունը, հաստատելով այս ենթադրությունը, ցույց է տալիս, որ միմյանց լրացնող այս տարբերակները ճշգրիտ հաջորդականությամբ ներկայացնում են մ.թ.ա. XIII դ. - XII դ. սկիզբն ընկած ժամանակաշրջանի իրադարձությունները: Այդ ժամանակաշրջանն են մատնանշում և իրենք՝ պատմիչները, որոնք, առանց կասկածելու իսկ ժամանակագրական խզման երևան գալու պահը, դեպքերը կապում են նախքան Նինվեում Նինոսի գահ բարձրանալու և նրա թագավորելու ժամանակի հետ: Հասկանալի է, որ Նինվեն հիշատակելու կարևորությունը չի կարելի բացարձակացնել, բայց կարծում ենք՝ սխալ կլինի և անտեսելը: Այս տեսանկյունից մոտենալով հարցին՝ տրամաբանական կլինի ավանդության սկիզբը կապել Նինվեի՝ աթոռանիստ դառնալուն անմիջապես նախորդած ժամանակաշրջանի հետ: Առաջնորդվելով պայմանականորեն ելակետային ընդունված այս դրույթով՝ կարելի է իրադարձությունների սկիզբը կապել Մավմանասար I-ի (մ.թ.ա. 1274-1245 թթ.) օրոք Նինվեի (տվյալ դեպքում՝ Նինվեի մոտակայքում գտնվող Կալխուն կամ Կալխա)՝ աթոռանիստ դառնալու ժամանակին: Հաշվի առնելով, սակայն, որ Արամն իր գործունեությունը սկսում է նախքան Նինոսի գահ բարձրանալը, բնական կլինի դեպքերի սկիզբը հասցնել Ադադնիրարի I-ի (մ.թ.ա. 1307-1275 թթ.) գահակալության ժամանակը:

Շարադրանքն ամբողջացնելու և նյութի քննությունից բխող հետևությունները հիմնավորելու նպատակով հպանցիկ անդրադառնանք մ.թ.ա. XIV դ. պատմաքաղաքական իրավիճակին: Հայտնի է, որ Աշշուրուբալիտի գահակալության ժամանակ (մ.թ.ա. 1365-1330 թթ.) Միտաննիից անկախացած¹⁴ Ասորեստանի հետագա

¹⁴ Հայտնի է, որ Տուշրատայի դեմ պատերազմող Սուպպիլուլիումաս I-ը, քրոջն ամուսնացնելով իր դրածո Խուկկանայի հետ և այդ ճանապարհով փորձելով պառակտել Հայասա-Ազգի թագավորությունը, դեպի Միտաննի-Լուխաշի կատարած արշավի ժամանակ, գրավելով Կուտ-

վերելքի համար Ադադնիրարիի օրոք նպաստավոր պայմաններ էին ստեղծվել: Իրոք, Միտաննիի թագավոր Տուշրատայի սպանությունից հետո սկսված գահակալական պայքարի հետևանքով թուլացած և Սուպպիլուլիումաս I-ի (մ.թ.ա. 1397-1348 թթ.) ու Աշշուրուբալիտի գործունեությամբ մասնատված Միտաննի, դադարելով հզոր թագավորություն լինել, խեթերի համար այլևս վտանգավոր չէր¹⁵: Ավելին, Միտաննիին՝ Ասորեստանի երեկվա տիրոջը, հաշվի չէր առնում նույնիսկ Ադադնիրարին, որին առավել անհանգստացնում էր տափաստանաբնակ արամեացիների պարբերական ներթափանցումը Հյուսիսային Միջագետք և նրանց տարածումն ու ամրացումը Եփրատի միջին հոսանքում և այլուր: Տեղին է նշել, որ դեռևս Արիկ-Դենիլին (մ.թ.ա. 1319-1308 թթ.), որին վերագրվում է Արևելյան Տիգրիս-Մեծ Զար-Հաքյարի լեռներ միջնատարածքի երկրների (Թուրուկի, Կուտիական լեռներ, Կադուխին՝ իր դաշնակիցներով) նվաճումը, արամեացիների դեմ մղած համատարապայքարից հետո նրանց բնակեցրեց Յաուրիի շրջանում¹⁶:

Ադադնիրարին արամեացիներից զգուշանալու հիմք ուներ. Միտաննիի երբուն գահին գտնվող Շատտուարա I-ը նրանց իր ծրագրերում որոշակի դեր էր հատկացրել: Փորձելով վերականգնել Միտաննիի նախկին դիրքն ու հեղինակությունը՝ Շատտուարան հարձակվեց Ադադնիրարիի վրա, բայց դա ողբալի ավարտ

մար/Քրիմար բերդը և այն «ընծայելով» Ալշիի (Ադանիթ) թագավոր Անթարատլին, ոչ միայն կանաչ լույս ստացավ դեպի Միտաննի, այլև ապահովեց իր թիկունքը: Նա ձեռք բերեց և Բաբելոնի բարյացակամությունը՝ ամուսնանալով Բուրնաբուրիաշ II-ի դստեր հետ, որը և դարձավ նրա երրորդ կինը: Եթե ավելացնենք, որ «օգնության» պատրվակի տակ նա Նուխաշիի գահից հեռացրեց նաև իրեն ապավինած Տուշրատայի զարմիկ Շարուպշային ու գահ բարձրացրեց իր դրածո Թետտիին, պարզ կդառնա, թե նա ինչպիսի խնամքով էր նախապատրաստվել պատերազմին: Ավելին, կասկած է հարուցում և այն հանգամանքը, որ հայրասպան Մատտիվագան (այլ ընթերցանությամբ՝ Շատտիվագա և կամ Կուրտիվագա / *Дьяконов И. М., Предыстория армянского народа, Е., 1968, с. 93*) իր հորեղբայր Արտադամայի և նրա որդու՝ Շուտտարնա III-ի դեմ մղած գահակալական պայքարի ժամանակ, ապաստանելով Սուպպիլուլիումասի մոտ, ամուսնացավ նրա դստեր հետ (մյուսն ամուսնացել էր Կարքեմիշի թագավորի հետ, որը նույնպես փախստականի կարգավիճակով էր գտնվում խեթական արքունիքում): Հետևանքը եղավ այն, որ քենակալները որոշ ժամանակ անց իրենց երկրների գահակալներից ժառանգության բաժին պահանջեցին: Միտաննիի հարցում այդ գործը փոքր-ինչ ձգձգվեց. Շուտտարնա III-ը օգնության համար իր հերթին դիմեց Բուրնաբուրիաշ II-ին խնամիացած և ծանրակշիռ նվերներով Եգիպտոսի բարյացակամությունը շահած Աշշուրուբալիտին և Ալշեի թագավորին: Այդ օգնության դիմաց Աշշուրուբալիտը ոչ միայն անկախություն ձեռք բերեց, այլև Ալշեի հետ իր սահմաններն ընդարձակեց Միտաննիի հաշվին (Ալշեն ստացավ Վերին Եփրատի ստորին հոսանքի և Տիգրիսի ձախափնյա հովիտն ընկած տարածքները (նույն տեղում, էջ 94): Միտաննիի կազմում գտնվող անկախ Շընգար (Սինգարա) մարզն անհետացավ, և դրա տեղում հայտնված Իսանի և Նիմիտ-Իշտարի շրջաններն անցան Ասորեստանին: Վերջինս *իրավաբանական* առումով իր ազդեցության ոլորտը վերցրեց *Սուրբարին և Սուզրին*: Փոխարենը Ասորեստանն ու Ալշեն, հաճույքով կատարելով Շուտտարնայի պահանջը, իրենց երկրներից վտարեցին Մատտիվագայի կողմնակից ազնվականներին, որոնք և վերադառնալով Միտաննի խաչվեցին (*Olmstead A. T., նշվ. աշխ., էջ 38-42*):

¹⁵ **Аветисян Г. М.,** *Государство Митанни (Военно-политическая история в XVII-XIII вв. до н.э., Е., 1984).*

¹⁶ **Olmstead A. T.,** նշվ. աշխ., էջ 44:

ունեցավ: Ադադնիրարին գերեց Շատտուարային, ապա հարկ վճարելու պայմանով ազատ արձակեց՝ կոպտորեն հասկացնելով, որ Ասորեստանի համար Միտաննին, իբրև պետություն, այլևս գոյություն չունի, և որ դրա բոլոր տիրությունների օրինական ժառանգորդը Ասորեստանն է¹⁷: Այս տեսակետից ասորեստանցիների՝ դեպի հյուսիս կրկնվող արշավանքները ենթադրել են տալիս, որ նրանց առաջնային նպատակն Ասորեստանի նոր սահմանների ամրապնդումն ու պաշտպանությունն է եղել: Իբրև օրինակ՝ նշենք կուտեացիների ներխուժումն Ասորեստան՝ դեռևս Արիկ-Դենիլուի օրոք. վերջինիս հաջողվեց ժամանակավորապես չեզոքացնել այդ վտանգը: Զարմանալի չէ, որ Ադադնիրարին կրկին հավաստիացնում է, թե ինքը «նվաճել», «հնազանդեցրել» և «ոչընչացրել» է կուտիների, լուլումեների, շուբարեցիների, կասիտների երկրները (այսինքն՝ Մասիու-Չայկական Տավրոս միջնատարածքից մինչև Ուրմիա լճի հարավն ընկած տարածքները), որոնք նա Ասորեստանի տիրություններ էր դիտում: Ասորեստանի հաջողություններին նպաստում էր նաև տարածաշրջանում ստեղծված իրավիճակը: Խեթաեգիպտական շարունակվող պատերազմը, որի ընթացքում Ադադնիրարին փոքր զինուժ, բայց ծանրակշիռ նվերներ ուղարկեց Ռամգես II-ին (մ.թ.ա. 1290-1223 թթ.), նրան ձեռքերի ազատություն տվեց իբրև Եգիպտոսի դաշնակցի, որը կարող էր ցանկացած պահի հարձակվել Բաբելոնի վրա: Վերջինիս թագավոր Կադաշման-Տուրգուն (մ.թ.ա. 1285-1268 թթ.) Մուվատալիի օգնության կոչին արձագանքեց՝ խոստումնալից նամակ գրելով, որին, սակայն, համապատասխան գործողություններ չհետևեցին:

Այս իրավիճակում Միտաննիում գահ բարձրացած Վասաշուտան փորձեց ստեղծված դրությունից դուրս գալ ոչ միայն արամեացիներին Ադադնիրարիի դեմ ուղղելով, այլև Միտաննիի՝ ոչ վաղ անցյալում թշնամի խեթերից օգնություն խնդրելով: Պատերազմի մեջ գտնվող Մուվատալիին չկարողացավ օգնել նրան, բայց ուղարկած նվերներն ընդունեց: Դեպքերի հետագա ընթացքը լուսաբանում է մի նամակ, որը, գրված լինելով Ադադնիրարիից հետո գահ բարձրացած Սալմանասար I-ի օրոք, ուղղված է Խատտուսիլի III-ին (մ.թ.ա. 1281-1255 թթ.), ինչը և ցույց է տալիս, թե նամակի հեղինակը Միտաննիի վերջին թագավոր Շատտուարա II-ն է եղել: Հայտնելով, թե ինչպես է Խանիգալբատը ավերվել Ադադնիրարիի կողմից, նա գրում է, թե Շուպրիայի թագավորը, որն իր տիրոջ կողմից կանչված է եղել նամակագրից իրեն պաշտպանելու համար, Միտաննիի գահն է հափշտակել և ներկա պահին երկիրն է ավերում՝ նեղություններ պատճառելով: Հետևաբար, երբ Սալմանասարը խորամուխ է եղել այն ծանր վիճակի մեջ, որում հայտնվել է Միտաննին, նա երկրի ղեկավարին գտել է հովանավորված՝ իր խեթ տիրոջ կողմից¹⁸:

Կարևոր նշանակություն ունեցող այս նամակից երևում է, որ Մուվատալիից օգնություն չստացած Վասաշուտայի դրությունն առավել ծանրացրել է Շատտուարա II-ը, որը, ըստ երևույթին, նպատակ ունենալով երկիրը դուրս բերել ճգնաժամից, պայքար է սկսել գահի համար: Ստեղծված պայմաններում Վասաշուտան, շարունակելով Շուպրիան դիտել իբրև Միտաննիի գերիշխանությունը ճանաչող եր-

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում, էջ 49:

կիր, պահանջել է, որ վերջինիս թագավորն օգնի իրեն ընդդեմ Շատտուարայի: Ասորեստանի գերիշխանությունը ճանաչող Շուպրիայի թագավորը, սակայն, վերջ է տվել իրենց ընդհանուր թշնամի դիտվող Վասաշուտային ու, գահը խլելով, ինչպես վկայում է ավանդությունը, հարկատու է դարձնում Միտաննիի տիրույթների այն մասը, որոնք նա իրենն էր համարում: Այդ տիրույթները, ինչպես և ցույց է տալիս «Շուպրիայի թագավոր» տիտղոսը կրող գահակալի երևան գալը, ընդգրկում էին լայնածավալ Շուպրիայի ողջ տարածքը: Ճիշտ է՝ Ադադնիրարին Շուբարի անվանումը կցում է Կաշիարիի (ավելի ուշ այն նշանակում է միայն Արգանեն)¹⁹ շրջանին, ինչպես կոտեսներ ստորև, այն ներառել է շատ ավելի մեծ տարածք, որը Միտաննիի թագավորները շարունակում էին իրենցը համարել: Իրականում դրանք, ինչպես նշվեց վերևում, Շատտուարա I - Աշշուրուբալիտ փոխհամաձայնությամբ անցել էին Ալշեին, ինչը փաստում են նաև խեթական արձանագրությունները: Ավելին, կարծում ենք, որ ողջ Շուպրիայի՝ Ալշեի գերակայությունը ճանաչող տարածք լինելու հանգամանքն է կողմնակի փաստում նաև Նաիրիի թագավոր Կակիայի (մ.թ.ա. IX դ.) Խուբուշկիայի տարածքում իր երկրի սահմանները պաշտպանելու փաստը: Հետևաբար, «Ալշեի թագավոր» տիտղոսը «Շուպրիայի թագավոր» տիտղոսով փոխարինվելը, ինչպես իրավացիորեն մատնանշում են հետազոտողները²⁰, պատահականություն դիտվել չի կարող: Մյուս կողմից, եթե հիշենք Բուրնաբուրիաշ II-ի՝ Եգիպտոսի բարձրագույն աստյանին ուղղած նամակի հիմնավորումը, ապա պարզ կդառնա նաև Շատտուարա II-ի բողոքի պատճառը: Բողոքելով Եգիպտոսի աստյանի որոշման դեմ, որով ճանաչվում էր Ասորեստանի անկախությունը, Բուրնաբուրիաշ II-ն իր անհամաձայնությունը հիմնավորում էր նրանով, որ Ասորեստանը մի շարք պայմանագրերով վասալական կախման մեջ էր գտնվում նաև Բաբելոնից. հետևաբար նա չէր կարող ամբողջությամբ անկախ համարվել, քանի որ իր անկախությունը ստացել էր միայն Միտաննիից, բայց ոչ Բաբելոնից²¹: Ինչպես հայտնի է, այդ կնճիռը Աշշուրուբալիտը հարթեց իր դստերը՝ Մուբալիտատ Շերրուային ամուսնացնելով Բուրնաբուրիաշի որդու՝ Կարահինդաշ II-ի հետ: Շատտուարա II-ը, սակայն, երևի թե հաշվի չէր առել, որ Սալմանասարի ժամանակվա Ասորեստանը նախկինը չէր, և որ Շուպրիայի թագավորի՝ Սալմանասարի հետ համաձայնեցված գործողությունների դեմ բողոքելը նույնն էր, ինչ Սալմանասարից գանգատվելը: Ամենայն հավանականությամբ, դեռևս Աշշուրուբալիտի ժամանակ, երբ Ասորեստանը և Միտաննիի իրենց սահմաններն էին ճշտում, իրավաբանորեն Ասորեստանի ազդեցության ոլորտում գտնվող խայտաբղետ ազգաբնակչությամբ Մուբարրին²² փոխարքայության կարգավիճակում է գտնվել, որի ազդե-

¹⁹ Տե՛ս Ադնոց Ն., նշվ. աշխ., էջ 52:

²⁰ Дьяконов И. М., նշվ. աշխ., էջ 96-97:

²¹ Olmstead A. T., նշվ. աշխ., էջ 42:

²² Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Արամ անձնանունը, որը, մեր կարծիքով, կապվում է դեռևս մ.թ.ա. III հազարամյակում հիշատակվող նույնանուն երկրի անվանը (տարբերակները՝ Արմե, Արման, Արմի, Արմե և այլն) [այս մասին տե՛ս նաև Երեսյան Ս. Տ., Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում (ՊԲՀ, 1958, N 3, էջ 68)], որը հնարավոր է՝ նաև իմաստով կապված լինի դեռևս շումերա-աքքադական աղբյուրներից հայտնի Շուբուր-Մուբարտու երկրի

ցության ոլորտում են եղել մինչև Ջարասպ լեռն ընկած տարածքները, ինչը և փաստված է ավանդությանը (Նինոսը Արամին իր երկրորդն է համարում): Այդ փոխարքայությունում, ինչպես և իրավացիորեն մատնանշում են հետազոտողները²³, առաջատար դերը Ալշեին է պատկանել, այլապես խեթական աղբյուրները չէին շեշտի, թե Ալշեի մարդիկ և Ասորեստանը իրար մեջ բաժանեցին Միտաննին²⁴:

Նյութերի քննության արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանը օտարների կողմից ասպատակվելու դրվագում արտացոլվել են խեթա-միտաննիական երկարատև պատերազմները, որոնց ընթացքում Արմե-Շուպրիայի (և ոչ միայն) տարած-

անվանը: Այն, ինչպես հայտնի է, տարբեր կերպ է ստուգաբանվել (**Մովսիսյան Ա.** Սրբազան լեռնաշխարհը, Ե., 2000, էջ 43). հավանական է համարվում նաև «շրջափակված» իմաստն արտահայտող *supuru* բառը (**Խաչատրյան Վ. Ն.**, նշվ. աշխ., էջ 134), որը, կարծում ենք, լավագույնս համադրվում է Աստվածաշնչում Փաղան-արամ կոչված Հյուսիսային Միջագետքին (Գիրք Օննոգ, գլ. ԻԸ): Արդ, եթե նկատի ունենանք, որ «Նոր Հայկազյան բառարանը» (հ. Բ, Ե., 1981, էջ 923, 932) փաղան/փանդամ բառը բացատրում է իբրև «ձորձ կամ վարշամակ, ծածկոյթ կանանց, կողպատ ի բերան, երեսացն», որը նույն «շրջափակող» իմաստն է արտահայտում, ապա կստանանք «շրջափակող-արամ» բառակապակցությունը, որի «արամ» մասնիկը կրկին հանդես է գալիս Հայկական Միջագետքի Արամ-Նախարաին անվան մեջ: Այն մասնագիտական գրականության մեջ թարգմանված է իբրև «երկու գետերի Արամ» (եգիպտական աղբյուրներում՝ «Նախարաինա»-գետերի երկիր) ձևով: Չժանրանալով «արամ» բառի վերաբերյալ արտահայտված կարծիքների վրա (**ar-t'**՝ «ջրերի կամ գետերի երկիր», «ամուսին, տղամարդ, մարդ», «սև, թուխ» և այլն). [**Ումառյան Ս. Հ.**, Համաշխարհային ջրհեղեղի առասպելը և հայերի նախահայրենիքը (Լրաբեր հասարակական գիտությունների, 1988, N 8, էջ 59-60), **Պետրոսյան Ա. Ե.**, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Ե., 1997, էջ 125, **Բարսեղյան Լ. Ա.**, նշվ. աշխ., էջ 238, **Գամքրելիձե Թ. Բ., Իվանով Բ. Բ.,** *Индоевропейский язык и индоевропейцы, т. второй, Тбилиси, 1984, с. 1325*], նշենք միայն, որ գայթակղիչ է «արամ» բառի մեջ տեսնել «բարձրունք», «բարձրավանդակ» իմաստը՝ այն բխեցնելով հնդեվրոպական **ar**-բարձրանալ, ելնել ձևից (**Գամքրելիձե Թ. Բ., Իվանով Բ. Բ.**, նշվ. աշխ., էջ 685): Այս դեպքում Արամ-նախարաինը կարող է ստուգաբանվել իբրև «ջրերի, գետերի բարձրավանդակ», իսկ փաղան-արամը՝ այդ «բարձրավանդակը փակող, շրջափակող տարածք»: Այս տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում և Տիգրիսի ու Ջաբի միջև գտնվող, Աշշուրնասիրպալի հիշատակած Բարգանիշտու անվանումը կրող բնակավայրը (**Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 74), որը, բացատրվելով իբրև «բարձր տուն», ինչպես մատնանշում է Գ. Բ. Ջահուկյանը, «համահունչ է Բարգանեսին» (**Առաքելյան Բ. Ն., Ջահուկյան Գ. Բ., Սարգսյան Գ. Խ.**, Ուրարտու-Հայաստան, Ե., 1988, էջ 154):

²³ **Дьяконов И. М.**, նշվ. աշխ., էջ 96-97:

²⁴ Անհրաժեշտության սահմաններում կատարված քննության արդյունքները, լավագույնս համադրվելով ավանդության հայկական տարբերակի տվյալներին, ցույց են տալիս, որ Նյութար Մադեսի կերպարի հետևում Վասաշուտան է կանգնած (Ա. Մովսիսյանը Վասաշուտային նույնացնում է Վաշտակի հետ. տե՛ս **Մովսիսյան Ա.**, Միտաննիի արքաները հայկազուն նահապետների և արքաների ցանկում, Երիտասարդ արևելագետների XX գիտաշրջանի թեզիսներ, Ե., 1999, էջ 25-27): Ասվածը բնականաբար հանգեցնում է Մադես-Միտաննի նույնացմանը: Արդ, եթե նկատի ունենանք, որ Միտաննի անվանումը գալիս է սկզբնապես Ուրմիայի (հին անունը՝ Մատիանե) շրջանում ապրող խուրրիական Մատիենի, Մատիանի ցեղի անունից, և որ Մադաի-Մադան երկիրը Աստվածաշնչի Մադան է (Գիրք Օննոգ, գլ. Ժ), որը Հովսեփոս Փլավիոսը հիշում է նույն Մադես անվամբ, ապա նշված նույնացումը համոզիչ կթվա [տե՛ս **Հովսեփոս Փլավիոս**, Հրեական հնախոսություն (թարգմ. ծանոթ. առաջ. Ս. Ս. Կրկյաշարյանի)], Ե., 1976, էջ 55: **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 279, 293-295, 311: **Аветисян Г. М.**, նշվ. աշխ., էջ 37-38):

քը ռազմադաշտի էր փոխարկվում: Չխորանալով նյութին չառնչվող մանրամասներին մեջ նշենք միայն, որ Խատտուսիլի III-ը, լավ տեսնելով Միտաննիի վիճակը, Ասորեստանի հզորացումն ու այդ կողմից եկող վտանգը, ձեռնամուխ եղավ հակասորեստանյան դաշնություն ստեղծելուն, որով շահագրգռված էր և Միտաննին: Վերջինս Ասորեստանի դեմ էր ուղղում նաև արամեացիներին, իսկ Խատտուսիլին հաջողվեց այդ դաշինքի մեջ ներգրավել Բաբելոնի երիտասարդ թագավոր Կադաշման-Էնիլ II-ին (մ.թ.ա. 1267-1253 թթ.): Այս իրավիճակում ուշադրություն է գրավում Խատտուսիլիի բարյացակամությունը Իշուվայի թագավոր Արի-Շարբումայի հանդեպ. նա Իշուվային է միացնում «Ուգաշտա մեծ երկիրը»: Չբացառելով ազգակցական կապերի դերը²⁵ նման արքայավայել նվիրատվություններ կատարելու համար՝ հազիվ թե կարելի լինի բացառել նաև հեռահար նպատակները, որոնք կարող էին ուղղված լինել ոչ միայն Ալշե-Ասորեստան դաշնությանը հակակշիռ ստեղծելուն²⁶, այլև Ուգաշտա-Իշուվայի միջև թշնամություն սերմանելուն և Ուգաշտայի միջոցով Իշուվային զսպելուն ու դրանով իսկ իր ձեռքերն ազատելուն: Պատահական չէ, որ Խատտուսիլին իր սահմանապահ գորքերի հրամանատարին հրահանգում է, որ Ազգի, Կասկա, Լուկա երկրների կողմից ոչ մեկը կովի համար չգա, իսկ Իշուվայի գորքի վրա աչք պահի²⁷: Նման անհանգստությունը հասկանալի է. հայկական թագավորությունների շահերը համընկնում էին ոչ թե խեթամետ Միտաննիի, այլ հակախեթական քաղաքականություն վարող Ասորեստանի շահերին: Վերջինիս թագավորները լավ էին հասկանում այս հանգամանքը՝ Խեթա-Միտաննի-Բաբելոն-արամեացիներ դաշնության դեմ իրենց մղած պայքարում: Պատահական չէ, որ կարճ ժամանակ անց Թուդխալիա IV-ը դժգոհում է Իշուվայի թագավոր Էիլի-շարբումայից, որ նա Ասորեստանի դեմ պայքարում իրեն միայնակ է թողել²⁸:

Այս իրավիճակում, թվում է, թե Սալմանասարը պետք է որ ուշադրությունը կենտրոնացնեք հյուսիսարևմտյան ուղղության վրա, այնինչ նա ճիշտ հակառակն է անում՝ գահակալության առաջին իսկ տարում «ջախջախելով» ապստամբած Ուրուատրիին: Տվյալ դեպքում Ուրուատրի ասելով՝ նա հասկանում էր Մեծ Զար-Վանա լիճ տարածքն ընդգրկող ութ երկրների միությունը²⁹, ինչը ցույց է տալիս, որ նա սկզբնապես իր թիկունքն է ապահովել խուրրի-ուրարտական դաշնությունից: Նա իր նախորդների պես հավաստում է նաև, թե ճնշել է ապստամբած Կադմուխիին: Այս վկայությունները հուշում են խուրրիալեզու բնակչությունից ունեցած նրա երկյուղի մասին, և, կարծում ենք՝ անհիմն չի լինի ապստամբների գործունեության հետևում տեսնել Միտաննիի վերջին գահակալի մատը: Բնականաբար, Ասորեստանն իր հայացքը պետք է դարձնեք հայկական թագավորությունների կողմը, որոնք իրենց անկախությունն ու տարածքային ամբողջականությունն էին պահպանում խեթա-միտաննիական ոտնձգություններից և տարածաշրջանում ամրացած

²⁵ Քոսյան Ա. Վ., Իսուվան (Օռփքը) մ.թ.ա. XIII-X դդ. (ՊԲՀ, N 1, 1997, էջ 178-179):

²⁶ Ադոնց Ն., նշվ. աշխ. էջ 51:

²⁷ Խաչատրյան Վ. Ն., նշվ. աշխ., էջ 80:

²⁸ Քոսյան Ա. Վ., Իսուվան (Օռփքը)..., էջ 184-185:

²⁹ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 279-280:

ու արդեն իշխանություններ հիմնած արամեացիներից:

Ռագմական գործողությունների ընթացքում ինչպես Խատտուսիլիի, այնպես էլ Կադաշման-Էնիլի ու արամեացիների հարձակումները անհաջող ավարտ ունեցան: Թերևս Խատտուսիլի կարողանար պարծենալ Աշշուրը ավերելով, որի համար էլ Սալմանասարը իր նստավայրը Կալախ (Նինվեից հարավ) տեղափոխեց, ապա պարծեցավ, թե անհաշիվ զինվորներ է սպանել, սեպի պես խրվել է խեթերի նախկին տիրույթները և այլն: Ամենայն հավանականությամբ, նաև արամեացիների դեմ մղված պայքարում Սալմանասարին զգալի օգնություն է ցուցաբերել նաև Արմե երկիրը: Ճիշտ է, այդ մասին ամեն մի հաջողություն իրեն վերագրող Սալմանասարը Ասորեստանի թագավորներին (այս հատկանիշը ընդգծված է. նրանք չափազանցներու մեծ հակում ունեին) ոչինչ չի ասում, բայց որ այդ աջակցությունը եղել է Պատմահոր կողմից ասորիներ անվանված արամեացիների դեմ, կասկած չի հարուցում: Թերևս այդ ժամանակների արձագանք է նաև Կաթնածիրի անվան հետ կապված ավանդությունը: Այդտեղ, և այդ մասին ասվել է արդեն³⁰, ասորիների նախնի *Բարշաւը* հանդես է գալիս իբրև աստվածություն, որին Պատմահայրը անձնավորել է: Փաստական նյութի համադրությունը ցույց է տալիս, որ այս դեպքում ևս ավանդությունը պատմական իրադարձությունները ներկայացնում է ճշգրիտ հաջորդականությամբ՝ ներառյալ Նինվեի (Կալախ) վերաշինվելը և աթոռանիստ դառնալը: Այդուհանդերձ, չնայած այս համապատասխանություններին, դժվար է Սալմանասարին նույնացնել Նինուսի հետ: Ճիշտ է, չնայած նա իր նախկին «Աշուրի քուրմ» տիտղոսին ավելացնում է և «հզոր թագավոր, բոլորի թագավոր» բառերը, բայց Միտաննին վերջնականապես կործանող և Ասորեստանի տարածքը զգալիորեն ընդարձակող թագավոր լինելով հանդերձ՝ նրա նվաճումները համեստ են: Նման տիտղոսի կարող է հավակնել նրա հաջորդը՝ Թուկուլթի-Նինուրտան (մ.թ.ա. 1244-1208 թթ.): Վերջինս գահ բարձրանալու առաջին իսկ տարում Յաուրիի մոտ (այդտեղ Արիկ-Դենիլին բնակեցրել էր արամեացիներին) ճակատում է կուտիների հետ դաշնակցած Կումենուի դեմ և պարտության մատնում: Նույն տարում նա հնազանդեցնում է Էրիսիդան, Շարնիդան, Մեխրին, հրի մատնում շուբարիների լայնածավալ երկիրը և հպարտությամբ նշում, որ Ալգիի թագավոր Էխլիթեշուրը փախել է իր առջևից, որ տուրք է վերցրել պարտված թագավորներից: Այնուհետև, շարունակելով իր հաղթարշավը, նա նկարագրում է Հայկական Տավրոսն անցնելու հետ կապված դժվարությունները, ապա իբրև կարևորություն չունեցող մանրամաս նշում, թե հաղթել է Նաիրի երկրների 43 թագավորների, բրոնզե օղեր հագցրել նրանց պարանոցներին և բերել «Մեծ լեռան» տաճարը՝ իր սրբավայրը, Աշշուր աստծո առաջ: Ամբողջացնելով առաջին տարվա արշավի արդյունքները՝ «շուբարեցիների, կուտիների և Նաիրիի բոլոր երկրների» թագավորներին հաղթող այս արքան ասում է նաև, թե անցնելով Եփրատը՝ Խատի երկրից քշել բերել է 28800 զինվոր³¹:

Չմանրամասնելով Թուկուլթի-Նինուրտայի՝ «Կարդունիաշի, Շումերի և Աքքա-

³⁰ Պետրոսյան Ա. Ե., նշվ. աշխ., էջ 16:

³¹ Խաչատրյան Վ. Ն., նշվ. աշխ., էջ 82-86:

դի, Միպպուրի և Բաբելոնի, Դիլմունի և Մելուխայի, Ստորինից մինչև Վերին ծով՝ երկարաշունչ տիտղոսաշարը կրող թագավորի ողջ գործունեությունը՝ նշենք միայն նրա արշավը Բաբելոն և վերջինիս թագավոր Կաշտիլիաշու IV-ին (մ.թ.ա. 1230-1223 թթ.) հաղթելն ու նախքան նրան Աշուր աստծուն զոհաբերելը, ստորացնելը՝ իր համար որպես ոտքի հարթակ օգտագործելով: Բաբելոնում 7 տարի մնալուց հետո, որի ընթացքում նա հասցրեց հիմնովին կողոպտել քաղաքն ու ավերել պարիսպները, Բաբելոնում բարձրացած ապստամբության պատճառով նա ստիպված վերադարձավ իր կառուցած Կուր-Թուկուլթի-Նինուրտա անունը կրող մայրաքաղաք³², ուր և սպանվեց (կամ ինքնասպան եղավ)՝ 7 տարվա ընթացքում չափահաս դարձած որդու՝ Աշուր-Նադին-ապալի (մ.թ.ա. 1207-1204 թթ.) ապստամբության ժամանակ իր հրդեհված պալատում մնալով: Նման վերջաբանը մերձենում է Շամիրամից փախած կամ նրա կողմից բանտարկված ու սպանված Նինոսի պատմությանը: Ուշադրություն է գրավում և նրա տիտղոսաշարում առկա Մելուխա տեղանունը, որի վերաբերյալ, այլ կարծիքների թվում, առկա է այն Հնդկաստանում տեղայնացնելու տեսակետը³³, ինչը և Մադանիին զուգահեռ, նույնպես համահունչ է ավանդությանը:

Ելնելով փաստական նյութի քննությունից՝ կարելի կլիներ 7 տարի Բաբելոնում մնացած Թուկուլթի-Նինուրտային նույնացնել նաև հայկական տարբերակի Նինոսի հետ, եթե նա հարձակված չլիներ Հայաստանի վրա. այդ արշավը ավանդությունը վերագրում է Ասորեստանի հիմնադիր դիտվող Նինվասին (հունականում այն Նինոսն է): Վերջինիս հանգստասեր, մեղմ կերպարը չի համապատասխանում Թուկուլթի-Նինուրտայի ռազմատենչ ոգուն: Մայրասպան Նինվասը իր մեղմ բնավորությամբ համապատասխանում է հայրասպան Աշուր-Նադին-ապալին, որին հաջորդած թագավորները, մինչև Թիգլաթպալասարը, Ասորեստանը թուլացնելուց բացի, ուրիշ արժանահիշատակ գործեր չեն կատարել: Տպավորությունն այնպիսին է, որ ավանդության հայկական տարբերակում որոշ շփոթություն է տեղ գտել իրար հաջորդած երեք թագավորների գործունեության վերաբերյալ (այդ պահը դիտվեց նաև հայկական ու հունական տարբերակների համեմատության ընթացքում): Իրոք, եթե Թուկուլթի-Նինուրտայի՝ Հայաստան կատարած արշավը վերագրենք Աշուր-Նադին-ապալին, իսկ մյուս պատերազմները՝ Սալմանասարին (կամ Սալմանասարի գործունեությունը վերագրենք Թուկուլթի-Նինուրտային), որի օրոք Միտանին վերջնականապես անհետացավ պատմության թատերաբեմից, ապա թե՛ ժամանակով և թե՛ գործունեությամբ Սալմանասար-Թուկուլթի-Նինուրտա մեկտեղումը կհամապատասխանի Նինոսին, իսկ Աշուր-Նադին-ապալը՝ Նինվասին:

Տվյալ դեպքում, սակայն, առավել կարևորը Թուկուլթի-Նինուրտայի՝ Հայաստան արշավելու փաստն է, որը և վկայվելով ավանդությամբ՝ տարակուսելի է

³² **Olmstead A.T.**, նշվ. աշխ., էջ 53-54:

³³ **Մովսիսյան Ա.**, Բաբելոնյան արքաների աշխարհակալությունը, էջ 18, **նույնի՝** Սըրբազան Լեոնաշխարհը, Ե., 2000, էջ 24-26:

դարձնում Շուպրիա (Ալշեի գերակայությամբ) - Ասորեստան համագործակցության վերաբերյալ վերը նշված տեսակետի իրավացիությունը, կամ չմերժելով այն ցույց է տալիս, որ Թուկուլթի-Նինուրտան որոշ պատճառներով փոխել է Հայաստանի հանդեպ ունեցած իր նախորդների դիրքորոշումը: Նման շրջադարձի պատճառը երևի թե նոր ստեղծված քաղաքական իրավիճակն էր: Իրոք, պատմության թատերաբեմից Միտաննիի հեռանալը, խեթերի հարձակումն Ասորեստանի վրա, խեթերի կողմից խրախուսվող խուրրի-արամեական ապստամբությունները և հակասորեստանյան տրամադրությունները Բաբելոնում, որոնց լավագույն ապացույցը Խատտուսիլիի նամակն է Կադաշման-Էնլիլին, բայց միաժամանակ նաև կասկա-հայկական հակախեթական դաշնության գործունեությունը, ինչպես նաև Ալշեի ու մյուս թագավորությունների անկախություն ձեռք բերելու ձգտումը, որն ամենևին չէր համատեղվում Ասորեստանի շահերին, Թուկուլթի-Նինուրտան հազիվ թե անուշադրության մատներ: Եթե ասվածին ավելացվի և այն, որ «Եթե Ալզին նույն Հայասայի ժողովուրդ Ազզին չէ, այնուհանդերձ, նա Պուրուլումզիի հետ միասին պատկանում է նույն ցեղին, ինչ որ Ազզին»³⁴, ապա հարկ կլինի Նաիրյան երկրներ կատարած նրա արշավանքը դիտել նաև այլ տեսանկյունից: Իրոք, իր հարձակումը բարձրագույն խոսքերով ներկայացնող Թուկուլթի-Նինուրտան, չգիտես ինչու, սոսկ բավարարվում է նաիրյան մի քանի թագավորների իր տաճարը բերելով և ապա ազատ արձակելով: Այս խոստովանությունն ակնհայտ է դարձնում նրա նպատակը: Նա ուզում է գերեվարված թագավորներից հավատարմության (իմա՝ դաշնակցելու) երդում ստանալ, ինչը և վկայում է ավանդության հունական տարբերակը: Ճիշտ նույն քայլն է կատարում նրա ժամանակակից խեթ գահակալ Արնուվանդա III-ը (մ.թ.ա. 1232 -1201 թթ.): Վերջինս, Պախուվա երկրի առաջնորդ և փայտզիացի Միդասի հետ նույնացվող³⁵ Միտայի ապստամբությանը վերաբերող վավերագրում մատնանշելով Իսուվա, Պախուվա, Ծուխմա, Կումախա և այլ երկրների ու քաղաքների ավագների *երդումի տակ լինելը*³⁶, փորձում է նրանց դիտել իբրև իր կամքը հլու-հնազանդ կատարող ծառաների: Բնականաբար, նրանք հազիվ թե հավատարիմ մնային նրա հետ կնքված անկայուն, կանխարգելիչ դաշնագրերին³⁷: Տվյալ դեպքում, սակայն, կարևորը դաշնագրի տեղեկություններն են մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ: Հաստատելով Ն. Ադոնցի՝ ժամանակին արված վերոհիշյալ ենթադրությունը՝ դրանք կրկին ցույց են տալիս, որ տարածաշրջանի բնակչությունը հայերն են եղել: Նորանոր փաստերով հիմնավորվող և կարծես թե հայագետների կողմից արդեն չվիճարկվող այս տեսակետի օգտին է խոսում նաև Արնուվանդան, որը, դիմելով Ազզիի կառավարիչ Ախիային, պահանջում է, որ սա ճնշի Իսուվա, Պախուվա, Ծուխմա, Կումախա և այլ երկրների ապստամբներին՝ հաշվի չառնելով *նրանց տոհմակից ու ցեղակից լինելը*³⁸: Դաշնագիրը նաև փաստում է, որ

³⁴ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 56:

³⁵ Герни О. Р., Хетты, М., 1987, с. 37.

³⁶ Խաչատրյան Վ. Ն., նշվ. աշխ., էջ 88-89:

³⁷ Քոսյան Ա. Վ., Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Ե., 1999, էջ 69:

³⁸ Խաչատրյան Վ. Ն., նշվ. աշխ., էջ 93:

մ.թ.ա. XIII դ. վերջին քառորդում մուշկ-փոյուզիացիների մի զգալի հատված, Կենտրոնական Անատոլիայից³⁹ արևելք տեղաշարժվելով, բնակություն է հաստատել Հայկական լեռնաշխարհի արևմուտքում: Ամենայն հավանականությամբ, դրան նպաստել են նաև խեթերը՝ հայ-կասկյան և այլ էթնոսների ապստամբություններին ու հուզումներին հակազդիչ ուժ ստեղծելու նպատակով, ինչից ելնելով էլ նրանք, կարող է, նորաբնակների համար արտոնյալ պայմաններ ստեղծել: Նման քայլի նպատակը բնիկների հետ հակասություններ ստեղծելն ու դրանք խորացնելն էր, որը ձեռնառու կլիներ կենտրոնական իշխանության համար: Նորաբնակները, սակայն, ինչպես և երևում է դաշնագրից, ամուսնական կապերի մեջ մըտնելով տեղացիների հետ ու յուրային դառնալով, լավ էին տեսնում խեթերի վարած քաղաքականության մեջ իրենց հատկացված դերի կործանարար հետևանքները: Բնականաբար, նրանք, միավորվելով բնիկների հետ, համատեղ հանդես են եկել ընդդեմ խեթերի (այդ միասնական գործունեության մասին է խոսում նաև նախքան ապստամբությունն սկսելը Միտայի կողմից սուրհանդակ ուղարկելը Իսուվա): Այդ է փաստում և ավանդությունը, համաձայն որի՝ Արամը, Մշակին ցեղակից դիտելով, նրան է հանձնում Առաջին Հայք (հմտ. Անիտտայի գործունեության տարածքը) կոչվող Կապադովկիայի կառավարումը:

Իրադարձությունների զարգացմանը ուշադրությամբ հետևող Թուկուլթի-Նինուրտան, որի առաջնային նպատակը խեթական վտանգի վերացումն էր (նա ընդգծում է 28800 զինվոր բերելը), բնականաբար, ձրգտելու էր հակախեթական այդ ուժերը իր շահերին ծառայեցնել: Ազգիին ազգակից նախրյան 43 թագավորների դաշնությունը մեծ ուժ էր, որին, ինչպես և փաստում է հունական ավանդությունը, նա կցանկանար տեսնել ոչ թե սոսկ «չեզոք» հարևանի, այլ հնազանդ, գրեթե կախյալ վիճակ ունեցող դաշնակցի դերում, որին հարկ էր իր ուժը ցուցադրել: Դա մըտրակի և բլիթի՝ երկակի նպատակ ունեցող քաղաքականություն էր:

Ստեղծված իրավիճակում Փոքր Ասիայի առանձին շրջաններ «Օռվի ժողովուրդների» ներխուժումը սոսկ նպաստեց բնիկների հակախեթական համընդհանուր շարժմանը և հետազոտողների (Ի. Դյակոնով, Ի. Ջինգեր, Ա. Քոսյան և այլք) այն կարծիքին, թե «Օռվի ժողովուրդները» կապ չունեն Խաթթուսայի կործանման հետ, որին և հազիվ թե կարելի է չհամաձայնվել: Խեթական տերության տրոհումը և թուլացումը տեսնող բնիկները⁴⁰, որոնք դարերով պայքարել էին իրենց ազատության համար, օգտագործելով բարենպաստ պայմանները՝ վերականգնել են իրենց սահմանները: Այդ պայքարում, ինչպես վկայում է ավանդությունը, զգալի է եղել և մուշկերի դերը: Ասվածից հետևում է, որ Պայապիս Քաադյանը, «որի հետ... համեմատելի են նաև խեթական ստորերկրյայքի աստված Պապայասի անունը և պալայական երկնքի աստծու պապա-կոչումը»⁴¹, կարող է անձնավորած լինել Մուպպիլուլիումաս II-ին, որը երևի խեթական տերության փլուզման ակնատեսը եղավ: Դրա հետևանքով հայկական տարածքները ազատագրվեցին: Այս բնական գործըն-

³⁹ *The New Encyclopædia Britannica, 2002, vol. IX, p. 408.*

⁴⁰ Քոսյան Ա. Վ., նշվ. աշխ., էջ 18-19 և հաջորդ:

⁴¹ Պետրոսյան Ա. Ե., նշվ. աշխ., էջ 44:

թացին Թուկուլթի-Նինուրտայի սպանությունից հետո թուլացած Ասորեստանը (հենց միայն Էնլիլ-Կուդուրի-ուցուր, մ.թ.ա. 1197-1193 թթ., անունը՝ «Էնլիլ, պահպանիր սահմանները», այդ թուլության պերճախոս վկայությունն է) խոչընդոտել չէր կարող: Բնական է, որ արևմուտքում իրենց սահմաններն ամբողջացնելուց և ապահովելուց հետո հայկական միությունների գերնպատակը պիտի լիներ և Ասորեստանի գերակայությունից ազատվելը, որն իրագործելու համար նրանց օգնել են հակախեթական պայքարում մշտապես Հայասա-Ազգիին սատարող կասկերը, յուրային դարձած մուշկերը: Նրանց կողքին Թիգլաթպալասար I-ը մատնանշում է նաև ուրումացիներին, որոնք, ինչպես և կասկերը, որակված են իբրև խեթերի երկրի անհնազանդ մարդիկ: Ուշադրություն հրավիրելով այս փաստերի վրա՝ Գ. Սարգսյանը իրավացիորեն դիտել է տալիս, որ մուշկու-ուրումու և Արամ-Մշակ գույզերի նմանությունը հազիվ թե կարող է պարզ գուգադիպություն լինել: Հետագոտողները կարծում են, որ կասկ-աբեշլացիների հետ եկած ուրումացիները, ամենայն հավանականությամբ, Հայասայի բնակիչներն են եղել⁴²: Արդ, եթե հաշվի առնենք, որ Արնուվանդա III-ը Միտային վերաբերող մի շարք երկրների բնակիչների արյունակից ու ցեղակից է համարում, իսկ Միտան նախքան ապստամբությունն սկսելը սուրհանդակներ է ուղարկում Իսուվա՝ իրենց գործողությունները փոխհամաձայնեցնելու համար, ապա տրամաբանական կլինի ենթադրել, որ հայկական միավորումները դաշնակից կասկերի և մուշկերի հետ հարավ են շարժվել Ասորեստանի հարևանությամբ ապրող իրենց ցեղակիցներին հակաստրեստանյան պայքարում սատարելու համար: Այս տեսակետից հազիվ թե կարելի է անտեսել Էյլագիզի շրջանում կատարված պեղումների արդյունքները: Չխորանալով մանրամասների մեջ՝ նշենք միայն, որ հետագոտվող ժամանակաշրջանի բնակավայրերը ավերածությունների են ենթարկվել, և, որ կարևոր է, հայտնաբերված նոր տեսակի խեցեղենը, օտար լինելով Եփրատից արևմուտք ընկած տարածքներին, բազմաթիվ գուգադիներ ունի Արարատյան դաշտի և ընդհանրապես Հայկական լեռնաշխարհի տարբեր հուշարձաններում⁴³:

Ամփոփենք. Հայկյան Արամի մեծագործությունները փառաբանող ավանդության՝ ընդհանուր գծերով կատարված քննության արդյունքները ցույց են տալիս, որ, ճշտիվ արտացոլելով մ.թ.ա. XIII-XII դ. սկիզբն ընկած ժամանակաշրջանի իրադարձությունները, ավանդությունը հպանցիկ անդրադառնում է նաև խեթամիտաննիական պատերազմներին: Ավանդության մեջ աղոտ հիշողություններ են պահպանված նաև առավել վաղ շրջանի իրողությունների վերաբերյալ, որի ապացույցը Առաջին Հայքի մասին, ինչպես նաև Նինուսի օտարական լինելու և այլ հիշատակություններն են: Փաստական նյութի քննությունը ենթադրել է տալիս, որ անվանադիր դիտվող Արամի կերպարում անձնավորված է համանուն եր-

⁴² Երևյան Ս. Տ., նշվ. աշխ., էջ 68, Առաքելյան Բ. Ն., Ջահուկյան Գ. Բ., Սարգսյան Գ. Խ., նշվ. աշխ., էջ 56-59:

⁴³ Sevin V., *The Early Iron Age in the Elazig Region and the Problem of the Mushkians*, AS, XLI, 1991, p. 87-97.

կիրը: Ինչ վերաբերում է Նյուքար Սադեսին և Բարշամին, ապա դրանցից առաջինը համապատասխանում է Միտաննիի նախավերջին թագավոր Վասսաշուտայի կերպարին, իսկ երկրորդը ասորի-արամեական աստվածությունն է: Այդ իրողությանը լավատեղյակ Պատմահայրը անձնավորել է Բարշամին: Նույնը դիտվում է Պայապիս Քաադյանի դեպքում: Ինչ վերաբերում է Նինոս-Նինվասին, ապա նրանց կերպարներում մեկտեղված են Սալմանասար I - Թուկուլթի-Նինուրտա և Աշուր-Նադինապալ թագավորները:

О ПРЕДАНИИ АРАМ-НИНОС

ХНКИКЯН О. С.

Резюме

В предании Арам-Нинос достоверно отражены события, имевшие место в XIII-XII вв. до н.э. На наш взгляд, Арам являет собой персонификацию одноименной страны. Что же касается Ньюкар Мадеса и Баршама, то первый из них соответствует Митаннийскому царю Вассашута, а второй – арамейскому божеству. То же самое можно сказать о Паяписе Каагяне, имя которого связывается с хеттским божеством Папаяси, а также с названием палайского божества – папа. В образах же Ниноса и Нинваса синкретизированы цари Салманасар I, Тукулти-Нинурт и Ашур-Надин-апал.

В предании нашли отражение также смутные воспоминания о царе Шамши-Ададе I (1813-1781 гг. до н. э.), который, будучи иноземцем, был возведен на ассирийский престол.